«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի,

ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի առաջարկներ

I. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

Հակակոռուպցիոն կրթություն

1. Նախադպրոցական, հանրակրթական, բարձրագույն ուսումնական և մասնագիտական կրթության հաստատություններում ներդնել հակակոռուպցիոն և բարեխղճության ուսուցումներ՝ հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները,
2. Իրականացնել հակակոռուպցիոն իրազեկման արշավներ,

Կոռուպցիայի կանխարգելման համընդհանուր առաջարկներ

3. Վարչական կոռուպցիան նվազեցնելու նպատակով գործարկել քաղաքացիական հասարակության կառույցների կողմից հակակոռուպցիոն կենտրոններ,
4. Բարելավել գույքի, եկամուտների և շահերի բախման հայտարարագրման համակարգը,
5. Օրենքի մակարդակով սահմանել կոռուպցիոն հանցանքները և զանցանքները,
6. Բարելավել ազդարարների համակարգը, այդ թվում՝ նախատեսել խրախուսման միջոցներ,
7. Բարելավել իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննության համակարգը,

Բիզնես ոլորտ, ներառյալ՝ հարկային և ազատ տնտեսական մրցակցություն

8. «Դեկապիտալիզացիայի մասին» ՀՀ օրենքի ընդունում,
9. Ներդնել հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրեր (Anti-corruption compliance program) իրավաբանական անձանց մոտ,
10. Վեր հանել հավատարմագրային կառավարման գործընթացում ծագող կոռուպցիոն ռիսկերը և քայլեր ձեռնարկել դրանց վերացման ուղղությամբ,

11. Ներդնել իրավաբանական անձանց վարչական կամ քրեական պատասխանատվություն՝ որպես պատժատեսակներ ներառելով նաև կանխարգելիչ բնույթի պատժատեսակներ, ինչպես, օրինակ, վարչական կամ դատական հսկողությունն է,
12. Վերանայել հարկային օրենսդրությունը, այդ թվում՝ սահմանել եկամտի նվազագույն ողջամիտ շեմ, որի դեպքում այն ենթակա չի լինի հարկման եկամտային հարկով, նվազեցնել եկամտային հարկի դրույքաչափերը և դիտարկել պրոգրեսիվ հարկման անցման նպատակահարմարությունը, շարունակել դիտել որպես շրջանառության հարկի օպտիմալ շեմ՝ նախկին 115 միլիոն ՀՀ դրամը մինչև մասնագիտական վերլուծություններով կապացուցվի, որ ՀՀ-ն անցել է անցումային ժամանակահատվածը, և ստվերային շրջանառությունը վերացել է, ինչպես նաև՝ նվազեցնել շրջանառության հարկի շեմը, նախատեսել շքեղության հարկ և ամրագրել կայունությունը որպես ՀՀ հարկային համակարգի սկզբունք,
13. Լայնացնել ՏՄՊՊՀ կարողությունները, այդ թվում՝ օժտել հետաքննություն անցկացնելու լիազորությամբ, ինչպես նաև կատարելագործել ՀՀ մրցակցության պաշտպանության օրենսդրությամբ սահմանված պետական օժանդակության վերահսկման մեխանիզմները և արտոնությունների տրամադրման համակարգը, այդ թվում՝ մշակել «Պետական օժանդակության վերահսկման մասին» ՀՀ օրենք,
14. Ամբողջովին ներդնել իրավաբանական անձանց իրական սեփականատերերի ինստիտուտը, մասնավորապես՝ ներդնել իրական սեփականատերերի ռեգիստր,
15. Ներդնել և գործարկել շուկայում անկանոնությունները վերհանող համակարգչային ապահովման ծրագրեր (screens)՝ որպես մենաշնորհների, գերիշխող դիրքի և հակամրցակցային համաձայնությունների դեմ պայքարի գործիք,
16. Բարելավել գույքը գերակա հանրային շահ դարձնելու գործընթացը, մասնավորապես՝ կատարելագործել օրենսդրությունը՝ տալով առավել հստակ սահմանում «գերակա հանրային շահ» եզրույթին՝ ի թիվս այլ փոփոխությունների:

Ընտրական ոլորտ

17. Ընտրություններում քաղաքական կոռուպցիայի դեմ պայքարելու նպատակով իրականացնել ՀՀ սահմանադրության ընտրական օրենսգրքի, կուսակցությունների մասին ՀՀ օրենքի, քրեական օրենսգրքի արմատական հակակոռուպցիոն

բարեփոխումներ, այդ թվում՝ ընտրություններին մասնակցությունը որպես պարտականության սահմանում, վարչական ռեսուրսի չարաշահման և ընտրատեղամասերի շուրջ քարոզչության իրականացման իրավակարգավորումների և պատասխանատվության միջոցների վերանայում ու խստացում,

Իրավապահ և դատական ոլորտ

18. Ձևավորել կոռուպցիայի դեմ պայքարի անկախ ունիվերսալ մարմին՝ կրթական, կանխարգելիչ և իրավապահ գործառույթներով՝ ներառյալ օպերատիվ-հետախուզական։ Տվյալ ժամանակահատվածում նշյալ մարմնի կազմավորման անիրատեսական լինելու դեպքում որպես միջանկյալ մարմին ձևավորել իրավապահ հակակոռուպցիոն մարմին՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության հիմքի վրա՝ օժտելով օպերատիվ-հետախուզական գործառույթներով։
19. Ստեղծել Կոռուպցիոն գործերով մասնագիտացված դատարան կամ հատուկ մասնագիտացված դատական կազմ,
20. Ստեղծել բարձրաստիճան պաշտոնատար անձանց մասնակցությամբ կոռուպցիոն գործերի հետաքննությունների և դատավճիռների գրանցամատյան,
21. Ներդնել մասնավոր դետեկտիվների ինստիտուտը՝ ընդունելով «Մասնավոր դետեկտիվ գործունեության» մասին ՀՀ օրենք,
22. Նախատեսել գողացված ակտիվների վերականգման ինստիտուտը, մասնավորապես՝ ստեղծել ակտիվների վերականգնման գրասենյակ, գողացված ակտիվների տեղեկատվական բազա, բարելավել փոխօգնության ինստիտուտը, այդ թվում՝ համապատասխան իրավապահ մարմինների կարողությունը և նախատեսել քաղաքացիական իրավունքի շրջանակներում ակտիվների վերականգնման մեխանիզմների ներդրում։

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի առաջարկներ

II. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

23. Դատական իշխանության ապահովելու նպատակով՝ ուժեղացնել դատավորների ընդհանուր ժողովի դերակատարումը,

24. Քրեական գործերի քննության ողջամիտ ժամկետներն ապահովելու նպատակով ձեռնարկել դատավորների աշխատանքային ծանրաբեռնվածության նվազեցման միջոցառումներ, այդ թվում՝ գրավոր ընթացակարգով առանձին հարցերի քննության կազմակերպում, աշխատանքային ծանրաբեռնվածության համապատասխանեցման ապահովում առկա ռեսուրսներին,
25. Ապահովել կին դատավորների տեսակշռի մեծացումը՝ հասցնելով 40%-ի,
26. Քրեակատարողական հիմնարկների ինստիտուտի բարեփոխում, ներառյալ՝ կալանավորված անձանց ընդհանուր թվի աստիճանաբար նվազեցում խափանման միջոցի պրակտիկայի բարելավման, ավելի մեղմ ազատազրկման վճիռների, պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի միջոցով, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի բարեփոխում՝ պարզեցված ընթացակարգերի և օբյեկտիվ չափանիշների սահմանման միջոցով ապահովելով գործընթացի արդյունավետությունը և կանխատեսելիությունը, քրեակատարողական հիմնարկների թվի, բյուջեի արդյունավետության վերանայում և բժշկական աշխատակազմի՝ առողջապահության նախարարության ենթակայության ներքո տեղափոխում,
27. Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության բարեփոխում, ներառյալ՝ մարդկային ռեսուրսների արդյունավետ համակարգի ներդրում, գործընթացի բարելավում, մասնավորապես՝ առավել հստակեցնելով դատական ակտերի հարկադիր կատարման ժամկետները, նվազեցնելով հարկադիր կատարողի հայեցողական լիազորությունները, հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային համակարգեր ներդնելով,
28. Պրոբացիայի պետական ծառայության գործունեության բարելավում, ներառյալ՝ պրոբացիայի պետական ծառայության աշխատակազմի բարեփոխում՝ ապահովելով անհրաժեշտ հաստիքներով (հոգեբաններ, սոցիալական աշխատողներ), այլընտրանքային խափանման միջոցների և քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված անվտանգության միջոցների կիրարկման ապահովում՝ պրոբացիայի պետական ծառայության միջոցով, օրենսդրության վերանայում՝ հնարավորության դեպքում պրոբացիայի պետական ծառայության համար նախատեսել իրավասությունների ավելի լայն շրջանակ,

29. Դատախազության բարելավում՝ ապահովելով մարդկային ռեսուրսների ժամանակակից քաղաքականության ներդրում,
30. Դատավորների, փաստաբանների, դատախազների, քննիչների վերապատրաստման համատեղ դասընթացների պրակտիկայի ինստիտուցիոնալացում,
31. Դատարանի ընկեր ինստիտուտի ամբողջական ներդրում, մասնավորապես՝ վերջինիս գործողության տարածում դատական բոլոր ատյաններում, ինչպես նաև՝ մասնագիտացված հասարակական կազմակերպություններին՝ որպես դատարանի ընկեր հանդես գալու հնարավորության ընձեռում,
32. Դատական սանկցիաների ինստիտուտի վերանայում,
33. Դատական համակարգում էթիկայի և վարքագծի կանոնների վերանայում և վերապատրաստման դասընթացների իրականացում,
34. Դատախազների նշանակման որակավորման հանձնաժողովի գործունեության թափանցիկության և արդյունավետության մակարդակի բարձրացում,
35. Խոցելի խմբերի համար արդարադատության հասանելիության բարելավման նպատակով հնարավորություն ընձեռել իրավունքի տարբեր ճյուղերում մասնագիտացված որոշակի չափանիշներին բավարարող իրավաբանական ընկերություններին մրցութային հիմունքներով իրականացնել հանրային պաշտպանի գրասենյակի գործառույթներ՝ համագործակցելով հանրային պաշտպանի գրասենյակի հետ,
36. Հանրային պաշտպանի ինստիտուտի ուժեղացում, մասնավորապես՝ հանրային պաշտպանների թվի ավելացում, հանրային պաշտպանի գործունեության մասին իրազեկման բարձրացում և հանրային պաշտպանի գրասենյակի կողմից առցանց խորհրդատվության ծրագրի ներդրում և անվճար խորհրդատվության ծրագրերի իրականացում բոլոր կատեգորիայի անձանց համար։
37. ԶԼՄ–ի հաղորդումների քննության կարգի արդիականացում, դրանց քննության կապակցությամբ հրապարակայնության և թափանցիկության ապահովում։

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի առաջարկներ

III. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

38. Ընդունել հատուկ օրենք իրավապաշտպան գործունեությամբ զբաղվող անձանց գործունեությունը համակարգելու համար, սահմանել հատուկ պատժամիջոցներ անձանց նկատմամբ, ովքեր խոչընդոտներ կստեղծեն իրավապաշտպանների գործունեության դեմ։
39. Իրականացնել կրթական արշավներ մարդու իրավունքների վերաբերյալ հասարակության լայն շերտերի հետ՝ համագործակցելով իրավունքի ոլորտում մասնագիտացված ՀԿ-ների հետ, ՀՀ փաստաբանական դպրոցի և արդարադատության ակադեմիայի դասընթացներում ներառել գենդերային բռնության և խտրականության կանխարգելման վերաբերյալ հատուկ դասընթացներ։
40. ՀՀ-ում ստեղծել մասնագիտական դատարաններ կամ դատական կազմ, որոնց քննության հիմնական առարկան կլինեն ընտանեկան բռնության հետ կապված գործերը։
41. Խտրականության դեմ ակտիվ պայքար իրականացնելու նպատակով ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում ներդնել հակախտրական ուղենիշներ։
42. Ներդնել բիզնես օմբուդմենի ինստիտուտը ՀՀ-ում, մասնավորապես՝ ընդունել «Գործարար շահերի պաշտպանության մասին» ՀՀ օրենք, նախատեսել գործարար շահերի պաշտպանի ինստիտուտի ձևավորման անկախ համակարգ, նախատեսել անձեռնմխելիության երաշխիքներ և լիազորությունների լայն շրջանակ։
43. Ընդունել «Մոռացված լինելու իրավունք»-ի վերաբերյալ համապարփակ օրենք, այդ թվում՝ հնարավորություն ընձեռել զանցանք, դելիկտ և թեթև ծանրության հանցանք կատարած անձանց՝ իրենց վերաբերյալ դատական ակտերն հրապարակվելուց որոշակի ժամանակ անց համակարգչային կայքէջերից և ինտերնետային որոնողական համակարգերից հեռացնել իրենց վերաբերյալ առկա տեղեկատվությունը, ինչպես նաև իրականությանը չհամապատասխանող և (կամ) ոչ ճշգրիտ տեղեկություններ պարունակող տեղեկատվությունը և այլն, հստակ սահմանազատել «մոռացված լինելու» և «տեղեկատվության ազատության» իրավունքները և ստեղծել պետական հանձնաժողով, որը կզբաղվի մոռացված լինելու իրավունքի հետ կապված հարցերով։

44. Ներդնել մեխանիզմներ աշխատավայրում սեռական ոտնձգությունների և գենդերային խտրականության վերաբերյալ, մասնավորապես՝ ներդնել բողոքների ներկայացման գաղտնի և անվտանգ համակարգ, և ապահովել զոհերի արդյունավետ հասանելիությունը փոխհատուցման միջոցներին, ինչպես նաև վարել վիճակարություն սեռական ոտնձգությունների գրանցված դեպքերի թվի, հետաքննությունների, քրեական հետապնդումների և իրավախախտների վերաբերյալ կայացած դատավճիռների վերաբերյալ»:
45. Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումները դիտել որպես ժողովրդագրական գերակա խնդիր և սահմանել խրախուսական մեխանիզմներ՝ աղջիկ երեխա ունենալու դեպքում:

21.05.2018թ.